

ՀԱՐՑԵՐ՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՑԱՆՔԻՆ ԿԱՍ

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ ՕՐԵՆՔԻՑ

Հարց 1.

- Դրոշմանիշային վճարը վճարվում է իրական² ն, թե անվանական աշխատավարձից:

Պատասխան 1.

- Դրոշմանիշային վճարը վճարվում է իրական (տնօրինվող, մաքուր) աշխատավարձից:

Հարց 2.

- Որքա՞ն պետք է կազմի նպատակային սոցվ-ճար կատարող և նպատակային սոցվճար չկատարող աշխատողի աշխատավարձի առավելագույն չափը, որպեսզի դրոշմանիշային վճարը կատարվի գործատուի միջոցների հաշվին:

Պատասխան 2.

-ՏՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին՝ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճար չեն վճարում այն անձինք, որոնք աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով և այդ աշխատանքային պայմանագրով հարկերը և պարտադիր այլ վճարները (ներառյալ՝ դրոշմանիշային վճարը) նվազեցնելուց հետո ստացվող աշխատավարձը չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը:

Վերոհիշյալ դրույթը և հարցի պատասխանը պարզաբանենք օրինակի միջոցով: Այսպես՝

Տվազագույն ամսական աշխատավարձի մասին՝ ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նվազագույն ամսական աշխատավարձը կազմում է 55 000 դրամ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նվազագույն աշխատավարձի չափի մեջ չեն ներառվում հարկերը, նպատակային սոցիալական վճարները, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսական այլ վճարումները: Հետևաբար, նորմալ աշխատաժամանակի պայմաններով և նպատակային սոցվճար կատարելու պարտավորություն չունեցող աշխատողի առավելագույն աշխատավարձի չափը, որի դեպքում դրոշմանիշային վճարը կկատարվի գործատուի միջոցների հաշվին կկազմի 74 074 դրամ (72 752 դրամի (նվազագույն ամսական աշխատավարձը՝ եկամտային հարկով) + 1000 դրամի (դրոշմանիշային վճարի) և եկամտային հարկի՝ 24.4%-ի՝ 322 դրամի հանրագումարն է): Այսինքն՝ եթե աշխատողի աշխատանքային պայմանագրում սահմանվել է 74 074 դրամից բարձր աշխատավարձ, ապա դրոշմանիշային վճարը կատարվում է աշխատողի հաշվին:

Նորմալ աշխատաժամանակի պայմաններով և նպատակային սոցվճար կատարելու պարտավորություն ունեցող աշխատողի առավելագույն աշխատավարձի չափը, որի դեպքում

դրոշման հիշային վճարը կկատարվի գործատուի միջոցների հաշվին կկազմի՝ 79 226 դրամ (72 752 դրամի (նվազագույն ամսական աշխատավարձը՝ եկամտային հարկով) + 5152 դրամի (նպատակային սոցիալական վճար) + 1000 դրամի (դրոշման հիշային վճարի) և եկամտային հարկի՝ 24.4%-ի՝ 322 դրամի հանրագումարն է): Այսինքն՝ եթե նպատակային սոցվճար կատարելու պարտավորություն ունեցող աշխատողի աշխատանքային պայմանագրում սահմանվել է 79 226 դրամից բարձր աշխատավարձ, ապա դրոշման հիշային վճարը կատարվում է աշխատողի հաշվին:

Հարց 3.

- Ու՞մ հաշվին պետք է կատարվի դրոշման հիշային վճարը, եթե նպատակային սոցվճար չկատարող և 1/2 դրույքով աշխատողի աշխատավարձը կազմում է 37 037 (74 074 : 2) դրամ:

Պատասխան 3.

- Եթե 1/2 դրույքով և նպատակային սոցիալական վճար կատարելու պարտավորություն չունեցող աշխատողի աշխատավարձն աշխատանքային պայմանագրով սահմանվել է 37 037 (74 074 : 2) դրամ և դրանից պակաս, ապա դրոշման հիշային վճարը կատարվում է գործատուի միջոցների հաշվին:

Եթե նպատակային սոցվճար չկատարող և 1/2 դրույքով աշխատողի աշխատավարձը կազմում է 37 037 (74 074 : 2) դրամից բարձր, դիցուք՝ 38 000 դրամ, ապա դրոշման հիշային վճարը կատարվում է աշխատողի հաշվին:

Հարց 4.

- Ու՞մ հաշվին պետք է կատարվի դրոշման հիշային վճարը, եթե նպատակային սոցվճար կատարող և 1/2 դրույքով աշխատողի աշխատավարձը կազմում է 39 613 (79 226 : 2) դրամ:

Պատասխան 4.

- Եթե 1/2 դրույքով և նպատակային սոցիալական վճար կատարելու պարտավորություն ունեցող աշխատողի աշխատավարձն աշխատանքային պայմանագրով սահմանվել է 39 613 (79 226 : 2) դրամ և դրանից պակաս, ապա դրոշման հիշային վճարը կատարվում է գործատուի միջոցների հաշվին:

Եթե նպատակային սոցվճար կատարող և 1/2 դրույքով աշխատողի աշխատավարձը կազմել է 39 613 (79 226 : 2) դրամից բարձր, դիցուք՝ 40 000 դրամ, ապա դրոշման հիշային վճարը կատարվում է աշխատողի հաշվին:

Հարց 5.

- Միևնույն գործատուի մոտ համատեղությամբ աշխատողը որքա՞ն պետք է վճարի դրոշման հիշային վճար՝ 1000 դրամ, թե՛ 2000 դրամ:

Պատասխան 5.

- Դրոշմանիշային վճարը կատարվում է համախառն եկամտից: Հետևաբար, միննույն գործատուի մոտ համատեղության դեպքում աշխատողը պետք է վճարի ընդամենը 1000 դրամ, եթե հիմնական և համատեղության համախառն եկամուտը գերազանցում է նվազագույն ամսական աշխատավարձի չափը:

Հարց 6.

- Տարբեր գործատուների մոտ համատեղությամբ աշխատողն արդյոք պե՞տք է կատարի դրոշմանիշային վճար՝ թե՛ հիմնական, թե՛ համատեղության աշխատավայրերից:

Պատասխան 6.

- Տարբեր գործատուների մոտ համատեղությամբ աշխատողները (անկախ համատեղությամբ աշխատանքի թվաքանակից) դրոշմանիշային վճար կատարում են յուրաքանչյուր գործատուից ստացված եկամուտից, եթե յուրաքանչյուր աշխատավայրից ստացված եկամուտն առանձին վերցրած բավարարում է դրոշմանիշային վճար կատարելու կանոններին:

Հարց 7.

- Ու՞մ հաշվին է կատարվում դրոշմանիշային վճարը, եթե նպատակային սոցվճար կատարելու պարտականություն ունեցող աշխատողն աշխատանքի է ընդունվել ամսվա կեսից և տվյալ ամսվա աշխատավարձը կազմել է նվազագույն ամսական աշխատավարձից ցածր:

Պատասխան 7.

- Եթե աշխատողի աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձը հարկերը, նպատակային սոցվճարը և դրոշմանիշային վճարը հանելուց հետո կազմում է 55 000 դրամից բարձր, ապա դրոշմանիշային վճարը կատարվում է աշխատողի հաշվին՝ անկախ տվյալ ամսվա համար հաշվարկված փաստացի աշխատավարձի չափից:

Հարց 8.

- Դրոշմանիշային վճարի օբյեկտ հանդիսացող վարձու աշխատողի տվյալ ամսվա համար հաշվեգրված եկամուտը ի՞նչ տարրերից է բաղկացած:

Պատասխան 8.

- Վարձու աշխատողի եկամուտ ասելիս պետք է հասկանալ ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 8-ի N853-Ն որոշմամբ սահմանված աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները:

Հարց 9.

- Ժամանակավոր անաշխատունակության նպաստից կատարվում է արդյոք դրոշմանիշային վճար:

Պատասխան 9.

- Ժամանակավոր անաշխատունակության նպաստից դրոշմանիշային վճար չի կատարվում:

Հարց 10.

- Վերջնահաշվարկից դրոշմանիշային վճար կատարվում է, թե՛ ոչ:

Պատասխան 10.

- Վերջնահաշվարկից կատարվում է դրոշմանիշային վճար:

Հարց 11.

- Եթե աշխատողն ազատվել է աշխատանքից հունվարի 1-ից մինչև 9-ն ընկած ժամանակահատվածում, ապա վերջնահաշվարկից դրոշմանիշային վճար կատարվում է, թե՛ ոչ:

Պատասխան 11.

-Տիրավական ակտերի մասին՝ ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև սվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում: ՏՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճար վճարելու պարտականությունը ծագում է 2017 թվականի հունվարի 1-ից: Նույն օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Ըստ arlis.am կայքի հրապարակման օրենքն ուժի մեջ է մտել 2017թ. հունվարի 9-ից: Հետևաբար, դրոշմանիշային վճար վճարելու պարտականությունը ծագում է 2017 թվականի հունվարի 1-ից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողն ազատվել է աշխատանքից մինչև 2017թ. հունվարի 9-ը: Այսինքն՝ մինչև 2017թ. հունվարի 9-ն աշխատանքից ազատված աշխատողի համար հաշվարկված վերջնահաշվարկից դրոշմանիշային վճար չի կատարվում:

Հարց 12.

- Քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություն մատուցողի ստացած եկամտից դրոշմանիշային վճար կատարվում է, թե՛ ոչ:

Պատասխան 12.

- Քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություն մատուցողի ստացած եկամտից կատարվում է դրոշմանիշային վճար, անկախ այն հանգամանքից, թե՛ պայմանագրային գումարն ի՞նչ հարաբերակցության մեջ է գտնվում նվազագույն ամսական աշխատավարձի նկատմամբ՝ մեծ է նրանից, թե՛ փոքր:

Հարց 13.

- Եթե քաղաքացիաիրավական պայմանագրում մատուցվող ծառայության ժամկետը սահմանված է 3 ամիս, իսկ պայմանագրով սահմանված գումարը պետք է վճարվի աշխատանքները կատարելուց հետո, ապա դրոշմանիշային վճարը պետք է կատարել յուրաքանչյուր ամիս, թե՛ պայմանագրով սահմանված գումարը ստանալու ամսին:

Պատասխան 13.

- Քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություն մատուցողին վճարվող գումարը հաշվարկվում է վճարային եղանակով, հետևաբար դրոշմանիշային վճարը կատարվում էգումարը վճարելու ամսին:

Հարց 14.

- Դրոշմանիշային վճարի ի՞նչ կարգ է գործում այն դեպքում, երբ նվազագույն ամսական աշխատավարձ ստացող վարձու աշխատողը նույն գործատուին մատուցում է նաև ծառայություն՝ քաղաքացիաիրավական պայմանագրով:

Պատասխան 14.

- Դրոշմանիշային վճարը կատարվում է համախառն եկամտից: Հետևաբար, միևնույն գործատուի մոտ աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողը պետք է վճարի ընդամենը 1000 դրամ:

Հարց 15.

- Ո՞ր հաշվին է փոխանցվում դրոշմանիշային վճարը:

Պատասխան 15.

- Դրոշմանիշային վճարը փոխանցվում է հետևյալ հաշվի համարին՝ ՀՀ կենտրոնական գանձապետարան, Հ/Հ 900005001186: